ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Փետրվարի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի Հանրապետության Խորհրդարանի նախագահ Վանգելիս Մեյմարակիսին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի եւ երկու երկրների դեսպանների:

Ողջունելով Հունաստանի Խորհրդարանի նախագահի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների միջեւ առկա ջերմ հարաբերություններին ու գործակցությանը, որ համահունչ է հավատակից երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց, որ պատմության մեջ երկու ժողովուրդներին ծանր հարվածներ են հասցվել, որոնք շատ հաճախ հաղթահարվել են փոխադարձ զորակցությամբ եւ միասնական ոգով:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հունաստանի Խորհրդարանի նախագահն անդրադարձան 2015 թ. Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներին: Նորին Սրբությունը ներկայացրեց Հայ Եկեղեցու կողմից ծրագրվող միջոցառումները, կազմակերպվելիք հիշատակի հոգեւոր արարողությունները՝ վստահություն հայտնելով, որ Քույր Եկեղեցիների պետերն ու տարբեր երկրների ներկայացուցիչներ իրենց մասնակցությունը կբերեն այդ կարեւոր ձեռնարկներին՝ հանուն մարդկության խաղաղ ու անվրդով ապագայի:

Այս կապակցությամբ տիար Մեյմարակիսը նշեց, որ Հունաստանը մշտապես զորակցել է հայ ժողովրդին Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման գործում եւ Հունաստանի Խորհրդարանը պատրաստակամ է նաեւ իր մասնակցությունը բերել տարելիցի միջոցառումներին:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Հայ Առաքելական եւ Հույն Ուղղափառ Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի, ինչպես նաեւ հայ-հունական կապերի սերտացման գործում Հունաստանի հայ համայնքի եւ Հայոց թեմի կարեւոր դերակատարության մասին: